ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՀԱԿՅԱՆ ՎԵՐԱ ԳՈՒՐԳԵՆԻ

# ԹԵՇՔԻԼԱԹ-Ը ՄԱԽՍՈՒՍԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**Է.00.02 - «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Երևան 2024**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ա. Գ. Ավագյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Վ. Գ. Թունյան

պատմական գիտությունների թեկնածու
Լ. Ս. Հովսեփյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայոց ցեղասպանության թանգարան - ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2024 թ. հուլիսի 11-ին, ժամը $12^{00}$-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲԿԳԿ 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստին (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա, 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2024 թ. հունիսի 11-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ պ. գ. թ., դոցենտ Ա. Ա. Փաշայան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Ատենախոսությունը նվիրված է «Միություն և առաջադիմություն» կուսակցության կառավարման տարիներին Օսմանյան կայսրությունում գործած «*Թեշքիլաթ-ը մախսուսա*» (այսուհետ՝ ԹՄ) անունով կազմակերպության համապարփակ և բազմակողմ քննությանը: Թեշքիլաթ-ը մախսուսան կարևոր դերակատարություն է ունեցել երիտթուրքական կառավարման ընթացքում, ինչպես նաև ազգայնական շարժման կազմավորման գործում (1919-1922): Մի շարք ուսումնասիրողներ պնդում են, որ Թուրքիայում խորքային պետության ձևավորումը նույնպես կապված է Թեշքիլաթ-ը մախսուսայի գործունեության հետ: Թուրքիայի Ազգային հետախուզական ծառայության հիմքում ընկած են թեշքիլաթական ավանդույթներն ու գործելաոճը:

Ներկայումս թուրքական պատմագրությունը հետամուտ է թուրքական ժխտողական տեսակետները պաշտպանող ուսումնասիրությունների հրատարակմանը, որոնցում հեղինակները չեն անդրադառնում Հայոց ցեղասպանության իրականացման հարցում կազմակերպության մասնակցությանը՝ համարելով դա սխալ և գիտական շրջանառությունից դուրս մղվող վարկած: Ուստի, նոր լույսի ներքո թեմայի ուսումնասիրությունը, այդ թվում՝ օսմանյան վավերագրերի և փաստաթղթերի նորովի մեկնաբանումը անհրաժեշտություն է՝ պատմական փաստերը և Հայոց ցեղասպանության իրականացման մեջ Թեշքիլաթ-ը մախսուսայի դերակատարությունը ճիշտ գնահատելու տեսանկյունից:

Թեմայի ուսումնասիրությունն ունի գիտական և քաղաքական արդի և կարևոր նշանակություն Օսմանյան կայսրության մեջ փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի դեմ բռնաճնշումներ և կոտորածներ իրականացելու, ինչպես նաև պետության ազգային անվտանգության համակարգն ու գործիքակազը հավաստի աղբյուրների հիման վրա ուսումնասիրելու տեսանկյունից, որի կարևոր բաղկացուցիչն է Թեշքիլաթ-ը մախսուսան:

**Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները:** Ատենախոսության նպատակն է հանգամանորեն ուսումնասիրել Թեշքիլաթ-ը մախսուսա կազմակերպության ստեղծման պատճառները, նպատակները, գործունեության ոլորտներն ու գործառույթները՝ հանգամանորեն լուսաբանելու համար առանցքային հետևյալ հարցերը.

- ներկայացնել այն կազմակերպությունը, որը մասնագիտական և հուշագրական գրականության մեջ վկայակոչված է *Թեշքիլաթ-ը մախսուսա* անունով.

- պարզել կազմակերպության գործունեության ժամանակահատվածը, ոլորտը, նպատակները.
- սկզբնաղբյուրների հիման վրա ներկայացնել այն հանգամանքները, որոնք կարող էին նման կազմակերպության ստեղծման պատճառ դառնալ.
- ճշտել, թե քանի տեսակի ԹՄ է գործել Օսմանյան կայսրությունում.
- պարզել՝ որ վարչական մարմնի վերահսկողության ներքո է այն գործել.
- ճշգրտել ԹՄ ղեկավար կազմը և նախագահներին, ներկայացնել կազմակերպության անձնակազմը.
- պարզել՝ ինչ գործունեություն է ծավալել այս կազմակերպությունն Առաջին աշխարհամարտի տարիներին հատկապես Կովկասում և Իրանում.
- պարզել՝ երիտթուրքերի կառավարման տարիներին ձևավորված և գործունեություն ծավալած այլ կազմակերպությունների փոխհարաբերությունները/ փոխկապակցվածությունը ԹՄ գրասենյակի հետ.
- պարզել՝ ինչ մասնակցություն է ունեցել ԹՄ 1913-1914 թթ. Էգեյան ծովի ավազանի հունական բնակչության արտաքսման և 1915-1916 թթ. Հայոց ցեղասպանության գործում.
- ուսումնասիրել կազմակերպության մարտավարությունը, մեթոդաբանությունը և դրանց գաղափարական հենքը:

**Ատենախոսության ժամանակագրական շրջանակները:** Ժամանակագրական առումով թեման ընդգրկում է 1912-1918 թթ. ժամանակահատվածը, ինչը պայմանավորված է նշված շրջանում ԹՄ հիմնական գործունեության հետ: Անդրադարձ է կատարվել նախորդող և հաջորդող հասարակական-քաղաքական, պատմական զարգացումներին, օսմանյան բանակի արդիականացման գործընթացին, պետության ազգային անվտանգության համակարգային խնդիրներին:

**Ուսումնասիրության մեթոդաբանությունը:** Ուսումնասիրությունն իրականացվել է պատմական հետազոտություններին հատուկ մի քանի մեթոդի կիրառմամբ: Օգտագործված են պատմահամեմատական, պատմաքննական և պատմավերլուծական, ինչպես նաև տերմինաբանական վերլուծության մեթոդները: Ուսումնասիրվել են սկզբնաղբյուրները, անդրադարձ է արվել դրանց վավերականության խնդիրներին, համեմատվել են այդ սկզբնաղբյուրների հիման վրա գրված

ուսումնասիրությունները, դրա հենքի վրա հերքվել, հաստատվել կամ էլ առաջ են քաշվել հիմնական եզրահանգումները:

**Ատենախոսության գիտական նորույթը:** Մեզանում առաջին անգամ վերլուծության է ենթարկվել ԹՄ կազմակերպությունը հայերեն և օտար աղբյուրների և ուսումնասիրությունների հենքի վրա՝ ներկայացնելով կազմակերպության թե՛ հետախուզական ճյուղը և թե՛ այն գնդերի ձևավորման պատմությունն ու գործունեությունը, որոնք շոշափելի մասնակցություն են ունեցել 1913-1914 թթ. Էգեյան ծովի ավազանի հունական բնակչության արտաքսման, ինչպես նաև 1915-1916 թթ. Հայոց ցեղասպանության իրագործման հարցում: Ատենախոսության շրջանակներում հստակեցվել են ԹՄ կազմակերպության գործունեությանն առնչվող մի շարք հանգամանքներ:

**Ատենախոսության կիրառական նշանակությունը:** Թեշքիլաթ-ը մախսուսա կազմակերպության գործունեությանը նվիրված բազմակողմ ուսումնասիրությունը կարող է նպաստել Թուրքիայի պատմության, ներառյալ ազգային անվտանգային համակարգի վերաբերյալ հետազոտություններում, դասախոսություններում և ուսումնական ձեռնարկներում: Թեման կարևոր դեր ունի Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ոլորտում:

**Ատենախոսության փորձաքննությունը:** Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Արևելագիտության բաժնում: Նիստին հեռավար մասնակցել է նաև Նեբրասկայի (ԱՄՆ) Լինքոլնի համալսարանի Արվեստների և գիտությունների քոլեջի պատմության բաժնի փոխնախագահ, պրոֆեսոր Պետրոս Տեր-Մաթոսսյանը: Ուսումնասիրության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են տարբեր գիտաժողովներում և լուսաբանվել հոդվածներում:

**Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը:** ԹՄ ուսումնասիրման սկզբնաղբյուրները օսմաներեն վավերագրերն են, երիտթուրքերի, նախկին թեշքիլաթականների, ցեղասպանության վերապրողների հուշագրությունները, 1919-1921 թթ. երիտթուրքերի դատավարության նյութերը:

Վերջին տարիներին ռազմական և այլ արխիվների գաղտնազերծված նյութերի հիման վրա գրվել են բազմաթիվ ատենախոսություններ և

ուսումնասիրություններ հիմնականում ԹՄ ռազմական ճյուղի մասին: Բնականաբար հրապարակվել են թուրքական տեսակետները պաշտպանող վավերագրեր: Այս առումով աշխատել են հատկապես երկու հեղինակներ՝ Ահմեթ Թեթիքը և Փոլաթ Սաֆին: 2014-2021 թթ. ընթացքում լույս է տեսել Ա. Թեթիքի՝ ԹՄ-ի քննությանը նվիրված ստվարածավալ ուսումնասիրության եռահատորյակը[1]: Թեպետև Թեթիքը բացառել է ցեղասպան ջոկատների կազմակերպման հանգամանքը, սակայն ներկայացրել է բանտարկյալների ներգրավման մանրամասները, քարոզչական ջոկատների գործունեությունը, մասնաճյուղերը, ուղղությունները, որոնք կարևոր են բազմաբևեռ այս կազմակերպությունն ավելի լավ ընկալելու տեսանկյունից: Մյուս հեղինակը Փոլաթ Սաֆին է[2]: Սաֆիի մագիստրոսական թեզը (2005 թ.) նվիրված էր Եգիպտոսում բրիտանական շրջափակման դեմ ԹՄ գործունեությանը, որը զարգացնելով՝ 2012-ին նա գրեց իր դոկտորական ավարտաճառը[3]: 2019-ին լույս տեսավ Սաֆիի «Հետախուզական պատերազմներ» գիրքը[4], 2020-ին՝ ԹՄ հրամանատարներից «Քուշչուբաշը Էշրեֆի այլընտրանքային կենսագրականը»[5]: Սաֆին գտնում է, որ թուրքական հետախուզությունը ավանդականորեն հակազդող և պաշտպանական բնույթ է ունեցել՝ միտված լինելով դիմակայելու ի հայտ եկած վտանգներին, իսկ 1918-ից այն հակազդողից փորձել է անցնել պաշտպանականի[6]:

Ռազմական և ներքին գործերի նախարարության բանավոր հրամաններով գործող ԹՄ ճյուղի վերաբերյալ ուսումնասիրության համար հիմնական աղբյուրը 1919-1921 թթ. տեղի ունեցած դատավարությունների նյութերն են, որոնք կարևոր են վկայությունների և վավերագրերի հավաքագրման գործընթացներով, ցանցի կառուցվածքի, ընդգրկված անձանց, երիտթուրքերի ու քեմալականների գաղափարական ու

---

[1] A. Tetik, Teşkilat-ı Mahsusa (Umûr-ı Şarkiyye Dairesi) Tarihi, C. I, 1914-1916, İstanbul, 2014; Tetik, Teşkilat-ı Mahsusa (Umûr-ı Şarkiyye Dairesi) Tar., C. II, 1917, İstanbul, 2018; Tetik, Teşkilat-ı Mahsusa (Umûr-ı Şarkiyye Dairesi) Tarihi, C. III–I: 1918, İstanbul, 2021.

[2] Սաֆին դասավանդում է Թուրքիայի ԱԱԾ-ը կից ակադեմիաներում և համալսարաններում: Նրա հետաքրքրությունների շրջանակում են Առաջին համաշխարհային պատերազմը, 1915 թ., ԹՄ, Թուրքիայի արդիականացում և այլ թեմաներ: Մասնակցել է ավելի քան 60 վավերագրական, կարճամետրաժ ֆիլմերի և հեռուստահաղորդումների պատրաստմանը: «Գաղտնի կազմակերպություններ» (Gizli Teşkilatlar) շարքի 17 գրքերի գլխավոր խմբագիրն է:

[3] P. Safi, The Ottoman Special Organization -Teşkilât-ı Mahsusa: An Inquiry into its Operational and Administrative Characteristics, Unpublished PhD dissertation, Bilkent Üniversitesi, Ankara, 2012.

[4] P. Safi, İstihbarat Savaşları: Birinci Dünya Savaşı'nda Suriye ve Lübnanda Casusluk Faaliyetleri, İstanbul, 2019.

[5] P. Safi, Kuşçubaşı'nın Alternatif Biyografisi, İstanbul, 2020.

[6] P. Safi, Milli İstihbarat Teşkilatı 1826-2023, İlk Defa Yayımlanan MİT Arşiv Belgeleriyle, İstanbul, 2023, s. 30.

կադրային իրավահաջորդության, փոխկապվածության հանգամանքները քննելու առումներով: Այս նյութերը հրատարակվել են «*Թաքվիմ-ի վաքայի*» թերթի և ժամանակի այլ թերթերի հավելվածներում[7], իսկ հետագայում ամբողջությամբ կամ մասամբ հրատարկվել են առանձին գրքերով[8]: Դատավարությունների ընթացքում «տեղեկատու դիվանի» ընդօրինակած վավերագրերը ներկայումս պահվում են Երուսաղեմում՝ Ս. Հակոբյանց վանքի մատենադարանում: Այս արխիվը առաջին անգամ ուսումնասիրել է Գրիկերը: Հետագայում Թաներ Աքչամի նախաձեռնությամբ թվայնացվել է Գրիկերի արխիվը[9]: Հավաքածուի մաս են կազմել Գրիկերի ԹՄ-ին նվիրված անավարտ ատենախոսությունների հայերեն և անգլերեն օրինակները[10], օգտագործած սկզբնաղբյուրներ և մասնագիտական այլ գրականություն, այդ թվում՝ Ստոդդարդի ատենախոսության պատճենը Գրիկերի ձեռագիր նշումներով, հարցադրումներով և դիտողություններով[11]:

ԹՄ քննության մյուս ծանրակշիռ սկզբնաղբյուրները հուշագրություններն են[12], որոնց հրատարակության հարցում մեծ

---

[7] **Գրիկէր**, Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, 1980, էջ 14-35:

[8] **V**. N. Dadrian and T. Akçam, Tehcir ve Taktil, Divan-ı Harb-i Örfi Zabıtları, İttihad ve Terakki'nin Yargılanması 1919-1922, İstanbul, 2008: Այս գիրքը որոշ փոփոխություններով թարգմանվել է նաև անգլերեն: Տե՛ս V. N. Dadrian and T. Akçam, Judgement at Istanbul: The Armenian Genocide Trials, New York, 2011; O. S. Kocahanoğlu, İttihat-Terakki'nin Sorgulanması ve Yargılanması (1918-1919), İstanbul, 1998. A. Aktar, *Son Osmanlı Meclisi ve Ermeni meselesi*, *Kasım-Aralık 1918*, Toplum ve Bilim. No. 91, Ankara, 2002, ss. 142-165; F. Ata, İşgal İstanbul'unda Tehcir Yargılamaları, Ankara, 2005; V. Yeghiayan, British Foregin Office Dossiers on Turkish War Criminals California, 1991: Եղիայանի գիրքը թարգմանվել է նաև թուրքերեն և անգլերեն:

[9]https://commons.clarku.edu/special_org/?utm_source=commons.clarku.edu%2Fspecial_org%2F3&utm_medium=PDF&utm_campaign=PDFCoverPages

[10]https://commons.clarku.edu/special_org/23/ [առբ.՝ 15.02.2019];
https://commons.clarku.edu/special_org/4/ [առբ.՝ 15.02.2019];
https://commons.clarku.edu/special_org/5/ [առբ.՝ 15.02.2019];
https://commons.clarku.edu/special_org/6/ [առբ.՝ 15.02.2019];
https://commons.clarku.edu/special_org/7/ [առբ.՝ 15.02.2019]:

[11] PH. Stoddart, The Ottoman Government and the Arabs, 1911 to 1918. A preliminary study of theshkilat-ı Mahsusa, Princeton University. Ատենախոսության պատճենի թվային տարբերակը տե՛ս "11 Teşkilat-ı Mahsusa - Philips Hendrick Stoddart" (2018). Special Organization. 3. https://commons.clarku.edu/special_org/3: Այս ատենախոսությունը թուրքերենով լույս տեսավ 1993 թ.՝ "Teşkilâtı Mahsusa: Osmanlı Hükûmeti ve Araplar 1911-1918 (Teşkilâtı Mahsusa Üzerine Bir Ön Çalışma), թրգ.՝ T. Demirel, İstanbul, 1993: Հետագայում քանիցս վերահրատարակվել է: Տե՛ս Stoddard "Teşkilâtı Mahsusa", Arma Yayınları, İstanbul, 2003; Stoddart, Teşkilat-ı Mahsusa, İstanbul, 2015: Սույն ատենախոսության մեջ օգտագործված են 1963 թ. ատենախոսությունը և 2015 թ. թուրքերեն հրատարակությունը:

[12] Հուշագրությունները սկսել են հրատարակվել 1918-ից: Մեհմեդ Սելահէդդին բեյի գիրքը նախ լույս տեսավ 1918-ին Կահիրեում արաբատառ, իսկ 1989 և 1990 թվականներին Պոլսում՝ լատինատառ: Տե՛ս M. Selahaddın bey, İttihad ve Terakki'nin Kuruluşu ve Osmanlı Devleti'nin Yıkılışı Hakkında Bildiklerim, İstanbul, 1990; Cemal Paşa, 1913-1922 Anılarım, Haz. F. Parin, İstanbul, 2010:

աշխատանք է կատարել Բեդիրխան բեյի թոռը՝ քրդական արմատներով թուրք պատմաբան Ջեմալ Քութայը, որի գրական վաստակը (շուրջ 174 գիրք) թուրք պատմագրության զարգացման, ինչպես նաև ԹՄ ուսումնասիրման համար շատ կարևոր է[13]:

Նկատենք, որ իրարից բավականաչափ տարբեր են միևնույն անձի հուշերը՝ տպագրված տարբեր հեղինակների կողմից: Օրինակ, եթե վերցնենք Քուրուչեշմեում վերջին հանդիպման և կարգադրությունների հատվածի նկարագրության անդրադարձը, Հ. Բայուրը, թեև հատվածը վերցնում է չակերտների մեջ, սակայն մեջբերում է յուրովի, մինչդեռ Թանսուի հրատարակած հուշագրության մեջ նկարագրությունը բոլորովին այլ է[14]: Բնականաբար այս հուշագրությունների մեջ Հայոց ցեղասպանության և նրանում ԹՄ մասնակցության մասին ոչինչ հնարավոր չէ գտնել, որը սակայն կարող ենք վեր հանել հետազոտական, համեմատական ուսումնասիրության արդյունքում: Օրինակ Ռ. Օրբայն առաջին հերթին հայտնի էր որպես Համիդիե զորքերի հրամանատար: Իսկ Համիդիե զորքերի միավորումը *թեշքիլաթի* հետ նոր երևույթ չէր: Համիդիե գնդերի բարձրաստիճան զինվորականներից էին Ինդիրաս աղան և իր եղբորորդի Զուբերը: Հասանցի (հասանան) աշիրեթից Թեջալդին բեյը 1895 թ. համիդիե գնդի քայմաքամն էր, իսկ Առաջին աշխարհամարտի

---

Ջեմալ փաշայի հուշերը կան նաև հայերենով, տե՛ս **Ջեմալ-փաշա,** Հայկական հարցը, Աշոտ Հովհաննիսյանի առաջաբանով, Յերեվան, 1927: Էշրեֆի հուշերը հրատարակել է նաև Սթոդդարդը, տե՛ս Teşkilat-ı Mahsusa Arabistan, Sina ve Kuzey Afrika Müdürü Eşref Bey'in Hayber Anıları, Hayber'de Türk Cengi, Eşref Kuşçubaşısı, yayına hazırlayan Ph. H. Stoddart, H. Basri Danışman, İstanbul, 1997: Երկու հուշագրությունների հեղինակ է Գալիփ Վարդարը: Ittihat ve Terakki İçinde Dönenler, anlatan G. Vardar, hz. S. N. Tansu, İstanbul, 1960; S. N. Tansu, İki Devrin Perde Arkası: Teşkilat-ı Mahsusa Başkanı Hüsamettin Ertürk, İstananbul 2012, epub: Գալիփ Վարդարը պատերազմի տարիներին ընդամենը 14 տարեկան էր: Ժամանակակիցները ասում են, թե նա, իր ընկերներին հավաքելով, կազմել է չեթեական խումբ ու միացել թեշքիլաթին: Հետագայում միացել է Քեմալական շրջանում ձևավորված գաղտնի կազմակերպություններից՝ M.M. ցանցին (M.M. Grubu): Եղել է Քեմալի ամենահավատարիմ զինվորներից մեկը: Մահացել է 1958 թ. նոյեմբերի 10-ին՝ Աթաթյուրքին նվիրված ոգեկոչման ճառն ասելու ժամանակ:

[13] Birinci Dünya Harbinde Teşkilat-ı Mahsusa ve Hayber'de Türk Cengi, hz. Cemal Kutay, İstanbul, 1962; C. Kutay, Osmanlı'dan Cumhuriyet'e Yüzyılımızda Bir İnsanımız Hüseyin Rauf Orbay, C. V, İstanbul, 1992 (Օրբայը զինադադարի պայմանագիրը ստորագրողներից մեկն էր, մյուսը Հիքմեթն էր, երրորդը՝ Սաադուլան (տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923թթ.), Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 537): Ջեմալ Քութայը հրատարակում էր մի շարք, որը կոչվում էր "Tarih Aydinligi" (Պատմության լուսաբանում): Շարքի 40 հատորներից առաջին հինգի մեջ ընդգրկված են Ռաուֆ Օրբայի հուշերը "Rauf Orbay'ın anıları" վերնագրով: Şehit Sadrazam Talât Paşa'nın Gurbet Hatıraları, hz. C. Kutay, c. 3, İstanbul, 1983.

[14] Y. H. Bayur, Türk İnkılâbı Tarihi, c. III, 1914-1918 Genel Savaşı, Kısım: 4, Savaşın Sonu, Ankara, 1983, s. 712-713. հմմ. S. N. Tansu, Iki Devrin, epub, s. 126-127.

տարիներին *ԹՄ* գնդերից մեկի հրամանատարը[15], համագործակցում էր Էթեմի[16] (milis kumandani)[17] և նրա եղբոր՝ Չերքեզ Ռեշիդի հետ: Իր կատարած ոճրագործությունների համար Ռաուֆ բեյը ևս այլ երիտթուրքերի պես կանգնեց ռազմադաշտային դատարանի առջև, սակայն խույս տվեց դատավարություններից: Հետագայում՝ Ռաուֆ Օրբայը, Մուսթաֆա Քեմալի[18] (ծածկանունը՝ Նոյ բեյ[19], Շերիֆ բեյ), Ալի Ֆուադը (Ջեբեսոյ, ծածկանունը՝ Մուսա բեյ, ազգությունը՝ չերքեզ[20]), Ռեֆեթ Սերվեթ Բելեն Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան գլխավոր շտաբի հետախուզական վարչության փոխտնօրեն Քազըմ Քարաբեքիրի (1914 թ.)[21] հետ քեմալական շարժման առաջամարտիկներից էին:

Այս միակողմանի նկարագրություններից զատ նշենք, որ նախկին *թեշքիլաթական*ների հուշերում քիչ բան կարելի է գտնել նաև բուն կազմակերպչական, աշխատանքային մանրամասնությունների, ծրագրերի խորքայնության մասին: Հուշագիրներն ավելի շատ կենտրոնացել են տարբեր սահմաններում՝ Իրան-Աֆղանստան (Ռաուֆ Օրբայ), Իրաքյան ճակատի (Սուելյման Ասքերի) ռազմաստրատեգիական կարևորություն ունեցող գործողությունների նկարագրությունների վրա, որոնք երբեմն պատկերում են պատերազմով անցած զինվորի չափազանցված երևակայությունը:

---

[15] E. İnam, Rauf Bey, İstanbul, 1965, s. 65-67. Այլ մանրամասներ տե՛ս C. Kutay, Osmanlı'dan Cumhuriyet'e Yüzyılımızda Bir İnsanımız Hüseyin Rauf Orbay, C. V, İstanbul, 1992.

[16] Այն բանից հետո, երբ Էթեմը մեղադրվեց դավաճանության մեջ, նրան սկսեցին կոչել «Չերքեզ Էթեմ»: Տե՛ս Methin Sever, Kafdağı'nın Bu Yüzü, Türkiye'deki Kafkas Kökenliler, İstanbul, 1999, s. 44-45՝ ըստ **Ա. Ավագյան,** Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում (1920-1971 թթ.), Երևան, 2011, էջ 131:

[17] E. Hiçyilmaz, Çerkes Ethem, Yeşil Ordu ve Bolşevik Tabusu, 2013.

[18] Շատ է քննարկվում այն հարցը, թե Քեմալը արդյո՞ք ընդգրկված է եղել ԹՄ կազմ: Մեզ հասանելի չեն օսմաներեն վավերագրերը, որոնց առաջին զտողներից մեկը հենց Քեմալն էր: Զաղդաշ Յուքսելը 2020-ին հրատարակեց մի գիրք, որտեղ պնդում է, որ Քեմալը ԹՄ անդամ չի եղել, սակայն իր ուսումնասիրության 133-137-րդ էջերում հղում է վավերագրեր, համաձայն որոնց՝ 7-րդ բանակի հրամանատար Մուսթաֆա Քեմալը զեկուցագրեր է ներկայացրել ԹՄ վարչությանը (*7.Ordu Kumandanı Mustafa Kemal paşa…aşiretleri hakkında hazırladığı raporu Başkumandanlık vekaleti'ne ve TM'ya gönderilmiş):* Տե՛ս Ç. Yüksel, Teşkilat-ı Mahsusa ve Birinci Dünya Savaşı'ndaki Faaliyetleri, Ankara 2020, s. 135-137.

[19] A. Kılınç, *Osmanlı İstihbaratı Karakol Cemiyeti'nde Kod Adı Kullanımına Örnekler: "Nuh/Mustafa Paşa, Musa/ Ali Fuat Cebesoy, İsa/ Miralay Şevket Bey, Cengiz/Kara Vasıf",* TAD, C. 40 / S. 70, 2021, s. 252-275, s 252.
https://dspace.ankara.edu.tr/xmlui/bitstream/handle/20.500.12575/76752/29.pdf?sequence=1&isAllowed=y [առբ. 13/02/2022]: Ունեցել է նաև Շերիգ, կամ Գազեթեջի Շերիֆ ծածկանունները Gazeteci Mustafa Şerif: Տե՛ս **Yaşar Gürsoy**, Atatürk'ün Kod Adi: Mustafa Şerif, İstanbul, 2023.

20 **Ա. Ավագյան**, *Թուրքական բանակի բարձրաստիճան սպայության էթնիկական կազմի խնդրի շուրջ,* «Հայկական բանակ» N 1 (51), Երևան, 2007, էջ 38-43, 38:

[21] K. Karabekir, Günlükler, 1906-1948, 1.-2. Cilt, İstanbul, 2009, s. 431.

Քանի որ թեման իր կարևոր տեղն ունի Հայոց ցեղասպանության լուսաբանման հարցում, հետազոտությունն ինքնին տեղափոխվում է ցեղասպանագիտական ուսումնասիրությունների հարթություն, որտեղ մեծ աշխատանքներ են տարել Վ. Դադրյանը, Ա. Ավագյանը, Ռ. Գևորգյանը և ուրիշներ[22]: Հայոց ցեղասպանության և դրանում ԹՄ մասնակցության առնչությամբ հրապարակումներով է առանձնանում թուրք սոցիոլոգ, հետազոտող Թաներ Աքչամը[23]: 1992-ին հրատարակված ուսումնասիրություններում սկսնակ հետազոտողը թեպետև համոզված հայտարարում էր, որ թուրքական աղբյուրներում հայերին արմատապես ոչնչացնելու վերաբերյալ վավերագրերի փնտրտուքը անիմաստ է, քանի որ հայկական կոտորածն ուղղված չէր հայերի՝ որպես ցեղի լիակատար բնաջնջմանը[24], հետագա ուսումնասիրություններում, այս ուղղությամբ նրա տեսակետները կտրականապես փոխվել են[25]:

---

[22] V. N. Dadrian, Ermeni Soykiriminda Kurumsal Roller, Toplu Makaleler, çev. Atilla Tuyyan, Kitap 1, Istanbul, 2004; Dadrian,The Role of Turkish Physicians in the World War I, Genocide of Ottoman Armenians, Holocaust and Genoade Studies, V. 1, No 2, Great Britain, 1986, pp. 169-192. Dadrian, The Role of the Special Organization in the Armenian Genocide during the First World War, Oxford, 1993, p. 173-201. Dadrian, Türk Kaynaklarında Ermeni Soykırımı, Toplu Makaleler 2, İstanbul, 2005. Dadrian, *The Secret Young-Turk Ittihadist Conference and the Decision for the World War I Genocide of the Armenians,* Holocaust and Genocide Studies, 1993, Volume 7, Number 2, pp. 173-201; Dadrian, Ulusal ve Uluslararası Sorunu Olarak Jenosid, İstanbul, 1995. А. Авакян, Геноцид 1915 г: Механизмы принятия и исполнения решений, Ереван, 1999; А. Авакян, Черкесский фактор в Османской империи и Турции: (Вторая половина X1X-первая четверть XX вв.), Ереван, 2001. **Ա. Ավագյան,** *Չերքեզական ջոկատների մասնակցությունը 1915 թ. հայերի ցեղասպանությանը*, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 4, Եր. 2001, էջ 29-35: R. Kévorkian, The Armenian Genocide, A Complete History, New York, 2011. Kaiser H., Le génocide arménien: négation 'a` l'allemande', in Comitée´ de Dée´fense de la Cause Armée´nienne (ed.), L'actualitée´ du Gée´nocide des Armée´niens, Paris, 1999. **Հ. Հատիկյան,** Արևմտահայությունն Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների գործունեության ոլորտում 1878-1923 թթ., (թեկնածուական ատենախոսություն), Երևան, 2015: **Հ. Հատիկյան,** Արևմտահայությունն Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների թիրախում 1878-1923 թթ", Երևան, 2016 թ" :

[23] T. Akçam, *When Was the Decision to Annihilate the Armenians Taken*? Journal of Genocide Research, 2019, pp. 457-480. Նույնի՝ Killing Orders, Clark University, USA, 2018. Akçam, Turks' Crime Against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire: Princeton University Press, 2013. Akçam, A Shameful Act, The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility, 2006, epub. Akçam, İnsan Hakları ve Ermeni sorunu, İttihat ve Terakki'den Kurtuluş savaşı'na, Ankara, 1999.

[24] [*Türk belgelerinde Ermenilerin ırk olarak ortadan kaldırılmasına ilişkin planlar aramak boşunadır. Ermeni katliamı, ırk olarak Ermenilerin toptan yok edilmesini amaçlamamaktaydı].* Akçam, Türk Ulusal, s. 115, 118-19].

[25] T. Akçam, Killing Orders, Talat Pasha's Telegrams and the Armenian Genocide, Clark University, USA , 2018.

Ներկայումս Թուրքիայում ակտիվորեն շարունակվում են թեմայի վերաբերյալ հրապարակումները, որոնց փորձում ենք ուշիուշով հետևել և ծանոթանալ[26]:

**Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից, 4 էջ հավելվածից: Աշխատանքի ընդհանուր ծավալը 190+4 էջ է:

Ներածությունում ներկայացված են թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, ատենախոսության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, մեթոդաբանական հենքը, կիրառական նշանակությունը, օգտագործված աղբյուրների և գրականության ընդարձակ տեսությունը:

Առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին գլխում անդրադարձել ենք 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող զարգացումներին, գաղափարախոսական շարժումներին, քննել Առաջին աշխարհամարտում կայսրության մասնակցության դրդապատճառները: Հիմնվելով հայ և օտար ուսումնասիրությունների (Ե. Զարևանդ, Սարգսյան, Ջ. Կիրակոսյան և ուրիշներ, Շ. Մարդին, Ս. Աքշին, Զ. Թունայա, Ֆ. Ահմադ, Յ. Լանդաու, Ս. Շոու, Է. Ցյուրխեր) և սկզբնաղբյուրների վրա՝ ներկայացրել ենք Թեշքիլաթ-ը մախսուսա կազմակերպության ձևավորման նախապատմությունը:

Երկրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Այն նվիրված է ԹՄ կազմակերպության հիմնադրման դրդապատճառներին, մանրամասն քննարկված են Էրզրումի, Վանի և Տրապիզոնի շտաբների ձևավորման քաղաքական, պատմական և աշխարհաքաղաքական համատեքստերը: Ներկայացրել ենք Գերմանիայի նպատակները Կովկասի նկատմամբ մշակված երկարաժամկետ ծրագրերի ծիրից ներս, ինչպես նաև երկու տեսակ համարվող թեշքիլաթների՝ մեկ կենտրոնից ղեկավարման կապը, շրջանից շրջան ունեցած առանձնահատկությունները, և վերջնական նպատակը: Այս գլուխը շարադրելիս օգտագործել ենք Թուրքիայի ռազմական արխիվի փաստաթղթերի հիման վրա լույս տեսած փաստաթղթերի ժողովածուներ, հուշագրություններ և ուսումնասիրություններ՝ հատկապես կարևորելով Թուրքիայում վերջին 20 տարիների ատենախոսությունները (տպագիր և անտիպ) և այլ հրատարակություններ (հուշագրություններ՝ Ք. Էշրեֆի, Գ. Վարդարի, Ա. Ջեմիլ Դենքերի, Ռ. Օրբայի, Ջ. Բայարի, Ք. Քարաբեքիրի):

[26] Z. Levent, Teşkilat-ı Mahsusa'dan Kuva-yı Milliye'ye Gayrinizami Harp (1913-1922), Doktora tezi, Ankara, 2019; M. Bilgin, Teşkilât-ı Mahsusa'nın Kafkasya Misyonu ve Operasyonları, İstanbul 2017.

Ատենախոսությունները ոչ միայն կարևոր են նորահայտ վավերագրերի հիման վրա բուն նյութի ժամանակագրությունը ներկայացնելու առումով, այլև՝ Թուրքիայի Հանրապետության քաղաքական ուղեգիծը, Հայաստանի նկատմամբ ունեցած ծրագրերը, ռազմավարությունն ու տարածաշրջանում ունենալիք դերի հեռահար նպատակներն ըմբռնելու առումներով: Այլ կերպ՝ ԹՄ վերաբերյալ Թուրքիայում արված նոր ուսումնասիրություններում հստակորեն նկատելի են Հայաստանի նկատմամբ վերաբերմունքը և մշակված երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի հիմքերը: Սրա կողքին հստակ նկատելի է նաև Էրդողանյան Թուրքիայի վերաբերմունքը քեմալական Թուրքիայի և Քեմալի անձի նկատմամբ: Սա ցույց է տալիս նաև օսմանյան արխիվային նյութերի օգտագործման թուրքական կողմի ընտրողական, ժամանակի քաղաքական ղեկավարության հայեցողությամբ հանրայնացնելու վարքագիծը:

Երրորդ գլուխն ունի չորս ենթագլուխ: Այստեղ անդրադարձել ենք Անատոլիայում թուրքական ազգային պետություն ստեղծելու ծրագրերում ԹՄ կազմակերպության դերին, ներկայացրել ենք ԹՄ կառույցի աստիճանակարգը (հիերարխիա), անձնակազմը, համալրման կարգն ու ֆինանսավորումը: Մանրամասնորեն քննել ենք լայն տարածում գտած *Ումուր-ը շարքիյե դաիրեսի* գրասենյակի ձևավորման հիմքերը: Թուրքական կողմի ուսումնասիրություններում սա մեկնաբանվում է որպես մի գրասենյակ, որը ստեղծվել էր վերահսկողություն սահմանելու համար ԹՄ ցանցի վրա: Վերջին տարիներին ուսումնասիրություններում առաջ է քաշվում այն թեզը, որ այդ գրասենյակը ստեղծվել է մասնավորապես բանտարկյալների ու փախստականների ներգրավումը դադարեցնելու, անկանոն զորքերի ներգրավումը կանոնակարգելու և ԹՄ գործունեությունը վերահսկելու համար (P. Safi): Սակայն օգտագործելով հավասարապես թե՛ հայերեն և թե՛ թուրքերեն առաջնային աղբյուրները, կարողացել ենք անառարակելիորեն ցույց տալ, որ ԹՄ և Արևելյան գործերի գրասենյակը երկու տարբեր կառույցներ են, որոնք լրացնում են միմյանց, և ունեն գերակա և ստորադաս կարգավիճակ, սակայն երկուսն էլ գտնվում են Օսմանյան գերագույն շտաբի երկրորդ ստորաբաժանման վերահսկողության ներքո: Արևելյան գործերի գրասենյակը վերահսկում է Արևելյան նահանգներում գործած ԹՄ ջոկատները, որոնք և իրականացրել են Հայոց ցեղասպանությունը: Երկու տարբեր կառույցներ լինելը հաստատվում է հատկապես լուծարման առնչությամբ քննարկվող վավերագրերով: Համաձայն դրանց՝ լուծարվել է երկու կազմակերպություն՝ ԹՄ և Ումուր-ը շարքիյե դաիրեսի (BOA, HR. SYS, D. 2461, G. 31 (1)):

Երրորդ գլխում ներկայացրել ենք նաև ԹՄ մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը: Անդրադարձել ենք թուրքական ժխտողական

գործելաոճին, ցույց ենք տվել ցեղասպանության վավերագրական հենքը և դրա շահարկումները, ի վերջո հանգելով այն եզրակացության, որ այդ ջոկատներն անառարկելիորեն ունեցել են մասնակցություն Հայոց ցեղասպանությանը, ղեկավարվել են պետության բարձրաստիճան ռազմական և քաղաքական գործիչների կողմից՝ պետական հատուկ ծրագրի համաձայն:

Չորրորդ ենթավերնագրում անդրադարձել ենք ԹՄ լուծարմանը, որը, ինչպես ցույց ենք տալիս հանգամանորեն, թեև դադարեցնում է իր գործունեությունը այդ անվան ներքո, սակայն նախկին անդամները տարրալուծվում են այլ կազմակերպությունների և ցանցերի մեջ՝ գործնականում առաջ տանելով այն աշխատանքը, որը թուրքական ազգային պետություն ստեղծելու ԹՄ գլխավոր նպատակն էր: Ի վերջո գալիս ենք եզրահանգման, որ սա մի ցանց էր, որը ժամանակի ընթացքում կարողացել էր լուրջ ձևափոխությունների ենթարկվել և մեծ ներդրում ունենալ Մ. Քեմալի գլխավորած ազգայնական շարժման տարիներին:

Եզրակացություն բաժնում ներկայացրել ենք թեմայի վերաբերյալ հետևյալ եզրահանգումները.

• 1912-1913 թթ. արդեն կար մի կազմակերպություն, որը գործում էր ռազմական նախարարությանն առընթեր և կոչվում էր ԹՄ:

• Թուրք-իտալական և Բալկանյան պատերազմների ընթացքում ձևավորված կազմակերպությունը 1913 թ. ակտիվ գործունեություն է ծավալել Անատոլիայում թուրքական ազգային պետություն ստեղծելու ուղղությամբ, որը ենթադրում էր հակահայկական գործողություններ ոչ միայն 7 հայկական նահանգներում, այլև Օսմանյան կայսրության հայաբնակ այլ վայրերում: Այս խումբն իրականացրել է հայերի արտաքսման, զանգվածային սպանությունների կազմակերպման, հակահայկական տրամադրությունների ստեղծման և բորբոքման, թուրք բնակչության զինման և առհասարակ անկայուն և լարված իրավիճակ հարուցող գործողություններ:

• 1914 թ. թուրք-գերմանական պայմանագրի ստորագրումից հետո Էնվեր և Թալեաթ փաշաները ձեռնարկում են իրենց շուրջը համախմբել հավատարիմ մարդկանց և ստեղծել իրենց անձին ենթակա՝ ***«շահսա մահսուս»*** կառույցներ: Նրանք փորձում են օգտվել Գերմանիայի նյութական և ռազմական օժանդակությունից, սակայն մանևրելով առաջ տանել իրենց՝ թյուրք-իսլամական աշխարհակալ կայսրության ստեղծման ծրագիրը: Այս փուլում Էնվերը փորձում է ձևավորել Տրապիզոնի կենտրոնը և վերահսկողություն սահմանել Հյուսիսային Կովկասի ժողովուրդների, ինչպես նաև Հարավային Կովկասի՝ մասնավորաբար վրացիների նկատմամբ: Սակայն գերմանացիները, հասկանալով նրա նպատակը,

շտապում են իրենց ներկայությունը ապահովել Տրապիզոնում և սահմանափակել Էնվերի ձգտումները:

• Թալեաթ փաշան, որը կայսրության ապագայի վերաբերյալ իր պատկերացումներն ուներ, նույնպես կազմավորում է իր թեշքիլաթը՝ օգտվելով դեռևս 1913 թ. Էրզրումում կազմավորված խմբերից: Ի տարբերություն Էնվերի՝ Թալեաթի կազմավորումներն ավելի արդյունավետ են աշխատում, ինչը ոչ միայն չէր հակասում գերմանական կողմի շահերին, այլև հակառակը, նպաստում էր նրա հեռահար նպատակների իրականացմանը:

• Մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ ԹՄ-ն ի սկզբանե չի եղել հետախուզության համար պատասխանատու կառույց. դրա համար կար գերագույն շտաբի երկրորդ ստորաբաժանումը, որն իր հերթին օգտվում էր այլևայլ կազմակերպություններից, այդ թվում՝ ԹՄ տրամադրած տեղեկություններից, որոնք, ըստ էության, զուրկ էին տեղեկության ճշգրտման, մշակման և վերստուգման մեխանիզմներից:

• ԹՄ-ն ունեցել է երկու ճյուղ՝ ռազմական և քաղաքական, որոնք փոխկապակցված են միմյանց, նրանց տարանջատելն անհնար էր:

• Երկարաժամկետ ծրագրերի իրականացնելու համար, ձևավորվել են ԹՄ կենտրոններ, որոնց նպատակը տարածաշրջանում Թուրքիայի թելադրող պետության կարգավիճակի ապահովումն էր: Այն քայլերը, որոնք արվել են Վանի, Էրզրումի և Տրապիզոնի կենտրոնների շրջանակներում, երկարաժամկետ ձևաչափով հետապնդում էին Ռուսաստանի ազդեցության թուլացում և Թուրքիայի ազդեցության բարձրացում և՛ Կովկասի և՛ կովկասյան ժողովուրդների նկատմամբ:

• ԹՄ գործի շրջանակներում հաստատված է ցանցի համագործակցությունը վրացիների, Իրանի Ատրպատականի նահանգի թյուրքախոսների հետ: Հայության հետ որևէ ձեռնարկ, որևէ համագործակցություն հայտնի չէ, բացառությամբ մի քանի անհատական, ոչ ինստիտուցիոնալ դեպքերի, երբ հավաքագրվել են հայեր, մասամբ էլ ակամայից դարձել տեղեկությունների փոխանցման աղբյուր:

• ԹՄ Կովկասյան ստորաբաժանումները միանգամայն տարբեր էին կադրային, որակական և նպատակային առումներով: Կովկասյան ստորաբաժանումները համագործակցում էին ամենատարբեր կազմակերպությունների, մասնավորապես՝ Գաղթականների վերաբնակեցման տնօրենության, Կարմիր մահիկի, Լքյալ գույքերի, Ազգային պաշտպանություն կազմակերպության վարչությունների հետ: *ԹՄ* գործունեությունը լայնորեն կապված է եղել Տեղահանության և գաղթականության հանձնաժողովների (*İskân-i Aşâir ve Muhâcirîn Müdirîyeti*) գործունեության հետ: Հրապարակված փաստաթղթերի համաձայն

Սուլեյման Ասքերին (ԹՄ առաջին նախագահը) եղել է նաև այդ հանձնաժողովի նախագահներից:

• *ԹՄ* գործունեության վերաբերյալ գտնված նոր սկզբնաղբյուրների շնորհիվ բացահայտվում են *թեշքիլաթ*ականների վաղ շրջանի գործունեության օրինակներն ու նպատակները, որոնք ընդգրկում են նախացեղասպանական ամբողջ գործընթացը՝ «Թուրքիան թուրքերի համար», պանթյուրքիզմ, թուրքերի համար ազգային պետության ստեղծման ձգտում և այլն:

• *ԹՄ* ջոկատներն անմիջական մասնակցություն են ունեցել Հայոց ցեղասպանության իրականացման հարցում և այդ գործողությունները համակարգել են Էրզրումի, Վանի և Տրապիզոնի մասնաճյուղերը:

**Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ հրապարակումներում.**

1. **Սահակյան Վ.**, Մատենադարանի՝ Հայոց ցեղասպանության մասին արխիվային վավերագրերը (օսմաներեն վավերագրեր): Բանբեր Մատենադարանի, Երևան, 2018, հմր 25, էջ 291–310:
2. **Սահակյան Վ.**, Հատուկ կազմակերպության (*Թեշքիլաթ-ը մախսուսա*) անձնակազմի ու քանակի շուրջ, Մերձավոր Արևելք, Պատմություն, Քաղաքակրթություն, Մշակույթ, Երևան, 2018, հմր 13, էջ 221–230:
3. Sahakyan V., The Documents of Matenadaran on the Armenian Genocide, Georgian Source-Studies, Tbilisi, Meridiani Publishing, 2018, XIX/XX, pp. 201–204.
4. **Սահակյան Վ.**, «*Թեշքիլաթ-ը մախսուսա*» կազմակերպությունը Գրիգոր Կերկերյանի և Ֆիլիպ Ստոդդարդի ուսումնասիրություններում, Երիտասարդական 3-րդ գիտաժողովի զեկուցումների նյութեր, Երևան, 2017, էջ 28-38:
5. **Սահակյան Վ.**, 1894-1918 թթ. կոտորածների համեմատությունը *Թեշքիլաթ-ը մախսուսայի* կողմից իրականացվող գործողությունների հետ (Մատենադարանի վավերագրերի հիման վրա), Արևելագիտության հարցեր, Երևան, 2017, հմր 13, էջ 256–272:
6. **Սահակյան Վ.**, *Թեշքիլաթ-ը մախսուսա* գաղտնի կազմակերպությունը՝ Հայոց ցեղասպանության ոճրագործ, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր. Հումանիտար և հասարակական գիտություններ, Երևան, 2017, համար Ա., էջ 190-196:
7. **Սահակյան Վ.**, Հատուկ կազմակերպության (Թեշքիլաթ-ը մախսուսա) ձևավորման նախադրյալներ, Հայոց ցեղասպանություն - 100, Ճանաչումից՝ հատուցում, միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2016, էջ 198-211:

**8**. **Սահակյան Վ.**, Կովկասյան առաքելությունը «Թեշքիլաթ-ը մախսուսա» կազմակերպության գործունեության ծիրից ներս: Կովկասի պատմության հիմնահարցեր, գիտաժողով՝ նվիրված ճանաչված հայագետ - կովկասագետ Պավել Չոբանյանի ծննդյան 75 - ամյակին, Երևան, 2023, էջ 71-75:

ВЕРА СААКЯН ГУРГЕНОВНА
ТЕШКИЛАТ-И МАХСУСА ОРГАНИЗАЦИЯ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 «Всемирная история». Защита состоится 11 июля 2024 г. в 12:00 на заседании специализированного совета 006 “Всемирная история”, действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена организации «Тешкилат-и Махсуса», действовавшей в период правления партии «Союз и Прогресс» в Османской империи. Основы научного изучения этой структуры были заложены после Второй мировой войны. В настоящее время турецкая историография занимается публикацией исследований, защищающих взгляды турецкого отрицания. Авторы этих исследований часто не затрагивают роль и участие этой организации в осуществлении Геноцида армян. Более того, многие из этих исследователей считают факт Геноцида армян и причастность к нему Тешкилат-и Махсусы ложной гипотезой, постепенно теряющей доверие в научных кругах.

Тешкилат-и Махсуса — секретное разведывательное и оперативное подразделение Османской империи. Она сыграла значительную роль во время правления младотурок, а затем в формировании националистического движения (1919-1922).

Наследие Тешкилат-и Махсуса часто упоминается в дискуссиях о формировании «глубинного государства» в Турции. Считается, что некоторые из ее традиций и практик были сохранены и унаследованы Национальной разведывательной службой Турции (Millî İstihbarat Teşkilatı, MİT), созданной в 1965 году.

Поэтому научное исследование темы, публикация новых документов и интерпретация османских документов в новом свете становятся необходимыми не только с точки зрения баланса исторической правды, но и для понимания идеологии турецкого глубинного государства. Фундаментальное исследование помогает понять отдельные проявления деятельности турецких спецслужб, направленной против Республики Армения, а также курдов и других меньшинств в Турецкой Республике.

Диссертация включает введение, три главы, заключение и библиографию. В хронологическом порядке мы представили 1912-1918 годы, поскольку, согласно документам, именно в этот период организация действовала под этим названием.

В данном исследовании впервые представлена работа, основанная на источниках на армянском, турецком и других языках, проливающая свет как на разведывательное подразделение организации, так и на историю формирования и деятельности полков, участвовавших в депортации греческого населения Эгейского моря в 1913-1914 годах, а также Геноцид армян в 1915-1916 годах.

В рамках диссертации были выяснены дата создания организации Тешкилат-и Махсуса, процесс роспуска, а также причины и мотивы смены названия. Кроме того, была уточнена иерархия структуры, выявлены вовлеченные лица и очерчены взаимоотношения. Уточнены связи организации с другими организациями, министерствами, ведомствами, штабами и другими структурами, раскрыта цепочка взаимозависимостей, способствовавших реализации государственной программы создания турецкого национального государства.

В рамках исследования были выяснены взаимосвязи и различия между функциями Умур-и Шаркийе Дайреси и Тешкилат-и Махсуса, а также трансформации группировок с 1911 по 1923 год. Кроме того, были освещены инструменты и методология, используемые в информационной войне.

Отдельные главы и выводы диссертации могут иметь практическое применение в военной экспертизе, концептуализации национальной безопасности, общей истории, преподавании или изучении военной истории и других смежных областях.

VERA SAHAKYAN

TEŞKİLAT-I MAHSUSA ORGANIZATION IN THE OTTOMAN EMPIRE

Dissertation for the Degree of Candidate of Historical Sciences in the Specialty 07.00.02 "World History". The defense will take place on July 11, 2024, at 12:00 during the session of the specialized council 006 "World History" at the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia, located at 24/4 M. Bagramyan Ave, Yerevan, 0019.

SUMMARY

The dissertation is dedicated to the organization named "Teşkilat-i Mahsusa" which operated during the reign of the "Union and Progress" party in the Ottoman Empire. The foundations for the scholarly study of this structure were laid after the Second World War. Currently, Turkish historiography is engaged in publishing studies that defend Turkish denialist views. The authors of these studies often do not address the role and participation of this organization in the implementation of the Armenian Genocide. Moreover, many of these researchers consider the fact of the Armenian Genocide and Teşkilat-i Mahsusa's involvement to be a false hypothesis that is gradually losing credibility within scientific circles.

Teşkilat-ı Mahsusa was a secret intelligence and operations unit of the Ottoman Empire. It played a significant role during the Young Turk administration and later in the formation of the nationalist movement (1919-1922). The legacy of Teshkilat-ı Mahsusa is often cited in discussions about the formation of the deep state in Turkey. It's believed that some of its traditions and practices were preserved and inherited by Turkey's National Intelligence Service (Millî İstihbarat Teşkilatı, MİT), which was established in 1965.

Therefore, the scientific study of the topic, the publication of new documents, and the interpretation of Ottoman documents in a new light become necessary not only in terms of balancing historical truth but also in understanding the ideology of the Turkish deep state. The foundational study helps to understand certain manifestations of the activities of Turkish special services directed against the Republic of Armenia, as well as Kurds and other minorities in the Turkish Republic.

The dissertation includes an introduction, three chapters, a conclusion section, and a bibliography. Chronologically, we presented the years 1912 to 1918 because, according to the documents, it was during this period that the organization operated under this name.

With this study, for the first time, a work based on sources in Armenian, Turkish, and other languages is presented, shedding light on both the intelligence branch of the organization and the history of formation and activities of the

regiments that participated in the deportation of the Greek population of the Aegean Sea in 1913-1914, as well as the Armenian Genocide in 1915-1916.

Within the framework of the dissertation, the date of establishment of the Teşkilat-i Mahsusa organization, the process of dissolution, and the reasons and motivations for the name change were clarified. Additionally, the hierarchy of the structure was specified, individuals involved were identified, and relationships were delineated. The organization's connections with other organizations, ministries, departments, headquarters, and other structures were specified, elucidating the chain of interdependence that contributed to implementing the state program for the creation of the Turkish nation-state.

Within the study framework, the relationships, and differences between the functions of Umur-i-Şarkiyye Dairesi and Teşkilat-ı Mahsusa, as well as the transformations of the groups from 1911 to 1923, were clarified. Additionally, the tools and methodology employed in the information war were elucidated.

Individual chapters and conclusions of the dissertation may have practical applications in military expertise, conceptualizing national security, general history, teaching or studying military history, and other related fields.